նընդեան, Մկրտութեան, Քառասնօրեայ գալստեան ի տաճարն, երեսներեքամեայ գալստեանն յԵրուսաղէմ (Ծաղկազարդին), Խաչելութեան, Յարութեան, Համբարձման, Հոգեգալստեան, Պայծառակերպութեան և Վերջին Դատաստանին։

Աւետարանս իւր գեղեցիկ գրչութեամբն և սքանչելի նկարուքն արժանի է գրադարանի Ս. Էջմիածնի, թէեւ այն գրադարանի մէջ նրանից աւելի լաւ գրուած և ծաղկած Աւետարաններ շատ կան։

Ս. Էջմիածնի գրադարանին աւելի վայել է երկաթագիր մեծագիր մագաղաթեայ Աւետարանն Թարգմանչայ վանուց Գանձակայ, որ փոքր ինչ նմանութիւն ունի թուականով, գրչութեամբ և նկարուք սուրբ Էջմիածնայ գրադարանի հուչակաւոր փղոսկրեայ Աւետարանին, որ 1850 թուին բերուած է Մաղարթայ սուրբ Նախավկայի վանքից։

Ցիշեալ Կեարմախու եկեղեցւոյ Աւետարանն ունի հետեւեալ յիշատակարանը.

"Փառք ամենասուրբ Երրորդութեան . . . . . Գրեցաւ սուրբ Աւետարանս [ձեռամբ նուաստ և յետին գրչի Նիկողայոսի ունայնագործ մելանաւորի ի թուականութեանս Ասքանազեան և Արեւթեան տումարի ՌՃԴ և ըստ Նորումս շրջանի ԼԹ. և գալստեան Կենարարին ՌՈԾԷ (1655), ի ստոյգ և յընտիր աւրինակէ. եւս առաւել համարայիցն, զի գաղափար սորին ի դրանէ սուրբ Սարգիս եկեղեցւոյ, յաշխարհիս Ցունաց, յանեղաշէն և Աստուածապահ քաղաքիս ի Կաֆայ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սրբոյն Սարգսի Զաւրեղ Զաւրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, ի հայրապետութեան Հայոց Տեառն Փիլիպպոսի և յեպիսկոպոսութեան ամենայն հիւսիս կան կողման Տէր Գրիգորի աւրհնեալ քահանայապետի, զոր Տէր Քրիստոս պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ. ամէն։

Ի յայս ժամանակի գրեցաւ ամենագովելի և գերահուչակելի, գերակատար և գերապանծ գերապատուոյն և յոգնատես, լուսայեղծ և Աստուածապատում և սուրբ Աւետարանս . . . ,